ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

1 . ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար / ծածկագիր 1.2-1/:

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտ-մանը, վերլուծմանը, լուծում աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2 – րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան /կոչում/ կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ , կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու հանար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի հունիսի 25 -ին ժամը 12.00-ին, Խորոնքի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատա

- նքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի /պատճենները/ բնօրինակների հետ միասին.

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թ-ի մարտի 3-ի համար N 310 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձիք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճեները.
- մեկ լուսանկար 3x4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ.՝/0237/ 2-07-70, 0237 2-76-49/ :

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015 թվականի հունիսի 5-ը:

Հեռ. (0231) 6-86-89,(093) 75-31-43
Էլ.փոստ՝ khoronq.armavir@mta.gov.am
khoronq-guxapetaran@mail.ru